

**«ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝
ԳԾԱՀԱՆՎԱԾ ՌՈՒՄ ԻՆՏԵՆՆԵՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 1832 Թ.»՝
ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ**

Բանալի բառեր – Ֆրեդերիկ Դյու Բուա, Սևանա լիճ, հին (պատմական) քարտեզներ, ճանապարհորդ, ատլաս, ռուսական և ֆրանսիական քարտեզներ, պատմական սկզբնաղբյուրներ, էկոլոգիական հիմնախնդիրներ, ԱՏՀ (GIS) ծրագիր

Հին քարտեզների՝ որպես պատմական սկզբնաղբյուրի օգտագործումը արդիական է թե՛ հումանիտար և թե՛ էկոլոգիական հիմնախնդիրների լուծման առումով, և կարելի է արժեքավոր տեղեկատվություններ ստանալ տարածքի նախկին էկոլոգիական վիճակի վերաբերյալ, անել կանխատեսումներ:

Հատկապես վերջին տասնամյակներում մարդու ակտիվ գործունեությունը բնությանը հասցրել է աննկարագրելի վնաս: Էկոլոգիական հիմնախնդիրների մի մասը ունի գլոբալ բնույթ (բիոսֆերայի աղտոտում, օզոնային շերտի ոչնչացում, գլոբալ տաքացում, ֆլորայի և ֆաունայի բազմաթիվ տեսակների անհետացում, չվերականգնվող օգտակար հանածոների սպառում, անտառների հատում, անապատացում), իսկ մյուսը՝ տեղային: Մարդը, ներխուժելով համեմատաբար փոքր տարածք և այնտեղ գործունեություն ծավալելով, շատ դեպքերում վնասում է էկոհամակարգը, երբեմն այն հասցնում է ոչնչացման եզրին՝ հանգեցնելով բնապահպանական աղետի: Նմանատիպ իրավիճակ է ստեղծվել Սևանա լճի ավազանում¹:

Բնավ նպատակ չհետապնդելով անդրադառնալ առկա խնդիրներին՝ ցանկանում ենք ներկայացնել XIX դ. 30-ական թվականներին Սևանա լիճը բնորոշող որոշ տեղեկություններ, որոնք մեզ են հասել շվեյցարացի հայտնի ճանապարհորդ և գիտնական Ֆրեդերիկ Դյու Բուա ղը Մոնպերոյի (1798-1850) «Ճանապարհորդություն Կովկասի շուրջ, չերքեզների ու արխազների մոտ, Կովխիդա, Վրաստան, Հայաստան և Ղրիմ» վերտառությամբ վեցհա-

¹ Սևանա լճի ծագման և դրա ավազանի խնդիրների ուսումնասիրությամբ զբաղվել են մի շարք անվանի գիտականներ՝ Հ. Գաբրիելյանը, Ս. Մարգարյանը, Լ. Վարդանյանը, Կ. Պաֆենհոլցը, Վ. Օբրուչևը, Դ. Անուչինը, Ս. Միտտեն և այլք: Այսօր ձևավորվել է մի ընդհանուր կարծիք, Սևանա լճի զոգավորությունը ունի հրաբխատեկտոնական ծագում: Իսկ Սևանա լճի ավազանի պատմաաշխարհագրական հետազոտություններով և մասնավորապես դրա հիմնախնդիրներով զբաղվել են Ս. Սարդարյանը, Ե. Լալայանը, Օ. Խնկիկյանը, Գ. Միլիքիշվիլին, Հ. Հովհաննիսյանը, Հ. Հարությունյանը, Վ. Վեհունին և այլք:

տորյա աշխատության (III հատոր)¹, նրա կազմած «Ճանապարհորդությունն Կովկաս, չերքեզների ու աբխազների մոտ, Կովխիդա, Վրաստան, Հայաստան և Ղրիմ» ատլասի², անտիկ ու ժամանակակից աշխարհագրություն մասի «Սևանա լճի ավազանի քարտեզը Հայաստանում՝ զծահանված ռուս ինժեներների կողմից 1832 թ.» խորագիրը կրող քարտեզի (տե՛ս քարտեզ 1)³ և գեղանկարչական մասի՝ «Սևանա լճի տեսարանը Չիբուխլուից⁴, Հայաստան» նկարի միջոցով (տե՛ս նկար 1)⁵:

Մենք փորձ ենք արել վերլուծել վերոհիշյալ քարտեզը՝ արդյունքները համադրելով «Ճանապարհորդությունն Կովկաս, չերքեզների ու աբխազների մոտ, Կովխիդա, Վրաստան, Հայաստան և Ղրիմ» գրքի և այլ նյութերի հետ: Եզրահանգումները, հուսով ենք, հնարավորություն կընձեռեն հետազոտողներին մեկ այլ տեսանկյունից քննարկել Սևանա լճի բնապահպանական ժամանակակից հիմնախնդիրները:

Սկզբնաղբյուրների համակարգում կարևոր տեղ են զբաղեցնում քարտեզները, որոնք յուրահատուկ տեղեկություններ են հաղորդում օբյեկտների տարածական տեղաբախշման և ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունների մասին: Քարտեզները, աշխարհագրական աշխատությունները և այլ գրավոր սկզբնաղբյուրները՝ որպես անցյալի անմիջական վկայություններ, պատմական հետազոտություններում մեծ արժեք են ներկայացնում⁶: Գիտությունների ինտեգրացման և միջդիսցիպլինար հետազոտությունների շնորհիվ հին քարտեզների՝ անցյալի քարտեզագրական նյութի՝ որպես պատմական սկզբնաղբյուրի ուսումնասիրությունն այսօր շատ արդիական է, որը, լինելով ամենահեռանկարային ուղղություններից մեկը, արագորեն զարգանում է⁷:

Մեր նախորդ հրապարակումներում փորձել ենք ներկայացնել հանիրա-

¹ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, Voyage autour du Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, Librairie de Gide, Editeur des annales des voyages, t. III, Paris, 1839, p. 293-329:

² Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, Voyage au Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, ATLAS, Neuchatel en Suisse, chez l'Auteur, Paris, 1843. Ատլասը բաղկացած է երկու հատորից՝ 42x58 սմ չափերով: Դրանք բաժանվում են հինգ բաժինների կամ թեմատիկ մասերի, որոնցից յուրաքանչյուրը մի ամբողջություն է, ինչը դյուրին է դարձնում աշխատության պատշաճ ընկալումը:

³ Տե՛ս նույն տեղում, Carte du bassin du lac Sévang en Arménie, relevée par les ingénieurs russes en 1832, Lithographie de H. Nicolet à Neuchatel (Suisse), Série de géographie ancienne et moderne ou I^o Série, Pl. VII:

⁴ Գյուղը հիշատակել է դեռևս Կ. Գանձակեցին (13-րդ դ.) Ճապոտիկ ձևով, որը դարձրել են Չիբուխլու: Օովագյուղ է վերանվանվել 1935 թվականին: **Հակոբյան Թ.** և այլք, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 860:

⁵ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., Vue du lac Sévang, en Arménie, prise de Tchoubouklou, Série pittoresque ou II^o Série, Pl. XXXIII:

⁶ Տե՛ս **Салищев К.А.**, Картоведение, Москва, 1976, с. 320:

⁷ Տե՛ս Гедымин А., Медушевская О., Белов М., Андреев А., Гольденберг Л., Люблинская А., Критский Ю., Koeman С., Skelton R., Harvey P. և այլք:

վի մոռացության մատնված Դյու Բուայի դը Մոնպերոյի կյանքն ու գործունեությունը, անդրադարձել ենք նրա գիտական ժառանգությանը¹:

Դյու Բուա դը Մոնպերոն, լինելով բազմակողմանի զարգացած անձնավորություն, իր աշխատանքներում կարողացել է արձանագրել տվյալ ժամանակաշրջանում Կովկասում և Դրիմում տիրող իրավիճակը, շրջանառության մեջ դնել պատմական, աշխարհագրական, քարտեզագրական և մշակութային հսկայական նյութ, որը հնարավորություն է ընձեռում կատարել համեմատություններ և վերլուծություններ:

Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատություններում կան անշուշտ որոշակի անճշտություններ, բացթողումներ, սակայն աներկբա կարելի է փաստել, որ դրանք մեզ համար անգնահատելի պատմական սկզբնաղբյուրներ են:

Սևանա լճի ավազանի քարտեզի ընտրությունը՝ իբրև պատմաաշխարհագրական և քարտեզագրական հետազոտության սկզբնաղբյուր, պատահական չէ:

«Սևանա լճի ավազանի քարտեզը Հայաստանում» այս փուլում ուսումնասիրելու համար կիրառվել է քարտեզագրական հետազոտությունների մեթոդներից մեկը՝ նկարագրություն քարտեզի միջոցով, որը քարտեզների վերլուծության հայտնի և ավանդական եղանակներից է:

Կարելի է ընդհանուր գծերով նշել հետևյալը.

- Այն ընդգրկում է Սևանա լճի ամբողջ ավազանը:
- Մասշտաբը գծային է, տրված են 0-ից մինչև 10 թվերը, իսկ վերջում գրված է V`Verst (վերստ) բառի առաջին տառը: Ճշգրտեցինք քարտեզի իրական մասշտաբը հինգ վերստ²: Սակայն երբ հին քարտեզը (այն հա-

¹ Տե՛ս **Մխիթարյան Վ. Գ.**, Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերո՝ այդչափ հայտնի և մեզանում այդքան անծանոթ շվեյցարացի ճանապարհորդը (պատմաաշխարհագրական և քարտեզագրական ուսումնասիրություն) // «ՀՀ և մերձավոր արտասահմանի երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները», Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2017, էջ 82-90, *նույնի*՝ Les cartes françaises de la Transcaucasie comme sources historiques // L'Arménie et la Géorgie en dialogue avec l'Europe, du Moyen Âge à nos jours, Geuthner, France, 2016, p. 274-282, *նույնի*՝ Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոյի քարտեզը ադրբեջանական գիտական և քաղաքական շահարկումներում // «Հայագիտության հարցեր» (այսուհետ՝ «ՀԱ»), 2014, թիվ 3, էջ 34-52:

² Քարտեզի գծային մասշտաբը տրված է այնպես, որ հնարավոր չէ անմիջապես այն հասկանալ: Կարող ենք փաստել, որ գծային մասշտաբի երկարությունը 50,8 մմ է: Ռուսաստանում տվյալ ժամանակաշրջանում քարտեզների մասշտաբները հաշվում էին դյույմով (дюйм), իսկ 1 դյույմը հավասար է 25,4 մմ (2x25,4 մմ):

Մասշտաբը որոշվում էր քարտեզի վրա մեկ դյույմին բնության մեջ համապատասխանող վերստերի (վերստ (верст)=1 066,8 մ) չափով, և քանի որ գծային մասշտաբն ունի երկու դյույմ երկարություն, իսկ բաժանումների քանակը 10 է, ապա հստակ կարող ենք ասել, որ քարտեզը հինգ վերստանոց է (https://ru.wikipedia.org/wiki/Русская_система_мер (հասանելի էր 29.08.2019)):

Ասվածն ամբողջությամբ համընկնում է XIX դ. 30-ական թվականներին Ռուսական կայսրությունում քարտեզների կազման համար օգտագործվող մասշտաբային շարքին:

մապատասխանում է ժամանակակից քարտեզի 1:210000 մասշտաբին) համեմատում ենք այդ մասշտաբին մոտ ժամանակակից տոպոգրաֆիական քարտեզի հետ (1:200000), ապա տեսնում ենք, որ այն փոքր է իրական չափերից: Հակված ենք այն կարծիքին, որ հեղինակը քարտեզի իրական չափերը փոքրացրել է այնքան, որքան թույլ է տալիս Ատլասի էջի չափը, իսկ քարտեզի վրա միտումնավոր անփոփոխ է թողել գծային մասշտաբը: Այս ձևով նա փորձել է հուշել հետազոտողին քարտեզի ռուսական բնօրինակի իրական մասշտաբի և դրան համապատասխանող չափի մասին: Դա հաստատում է հեղինակի կազմած Ատլասի՝ «Պլանշետների բացատրություն: Անտիկ ու ժամանակակից աշխարհագրություն կամ I մաս» վերտառությամբ բաժնում քարտեզի չափերին վերաբերող նշումը. «Ես միայն թեթևակի փոքրացրել եմ իմ Ատլասի շրջանակներում այս աշխատանքը...»¹:

- Շրջանակի չափը՝ 31,5 x 35,6 սմ է:

• Քարտեզի շրջանակի ստորին մասում արված են հետևյալ մակագրությունները.

ա) ձախ մասում՝ ԴԲ (Դյու Բուա), կատարող՝ Բաշվելդ,

բ) աջ մասում՝ քարտեզը տպագրված է Նոշատելում (Շվեյցարիա), լիթոգրաֆիան՝ Նիկոլետի և Թեզի:

• Քարտեզի վրա տրված է աստիճանացանց՝ հյուսիսային լայնության 40° և արևելյան երկայնության 63° (հաշված Ֆեռոյի գրոյականից, որը Գրինվիչի գրոյականից արևմուտք է -17°39'46"-ով):

• Վերնագրի և լեգենդի (պայմանական նշանների) համար նախատեսված չէ առանձին տարածք, ինչպես Ատլասի մյուս քարտեզներում:

• Քարտեզի լեգենդի վերին մասում գրված ծանոթագրության մեջ տրված են նաև այն բնակավայրերը, որոնք Ռուսաստանին միանալու ժամանակ եղել են անմարդաբնակ:

- Քարտեզի լեգենդում նշված են.

ա) ջրանցքները (բայց նշանն օգտագործված չէ. այնտեղ ջրանցքներ չկան),

բ) եկեղեցիները, բնակավայրերը, որոնք ունեն եկեղեցիներ:

• Լեգենդում բացակայում են սովորական բնակավայրերի և ամրոցների (բերդերի) նշաններն ու գետերի հոսքի ուղղությունը ցույց տվող սլաքը, չնայած դրանք օգտագործվել են քարտեզում:

• Սևանա լճի արևմտյան ափի մոտ (լճի տարածքում) կա մակագրություն, որտեղ նշված է. «Այս ամբողջ թերակղզին ծածկված է մեծ ավերակներով, որոնք հիմնականում տարածվում են Ախ-կալայի և Այրիվանքի միջև»:

• Մակագրությունում (*Akh-kala*) և քարտեզում (*Ft. d. Akhkala*) այդ անվան գրելաձևերի միջև կա տարբերություն:

¹ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., Carte du bassin du lac Sévang en Arménie, relevée par les ingénieurs russes en 1832, Explication des planches. Série de géographie ancienne et moderne ou première Série, p. 1:

- Քարտեզագրական ստվերարկման մեթոդով փորձ է արվել տալ լեռնագագաթների և լեռնաշղթաների ուրվագծերը:

- Տրված չեն բարձրության նիշերը (տեղանքի բարձրությունը ծովի մակարդակից):

- Տրված չեն անտառները, ճահիճները և աղբյուրները:

- Լճի ավազիձի, գետային ցանցի և ճանապարհացանցի գծային տարրերը տրված են հստակ:

- Քարտեզում երևում է Գիլի լիճը, որը Սևանա լճի ջրի մակարդակի արհեստական իջեցումից հետո չորացել է:

- Տեղանունները գրված են անփութորեն՝ ի տարբերություն Ատլասում տեղ գտած մյուս քարտեզների:

- Գրությունները շատ հատվածներում դժվարընթեռնելի են:

Վերը շարադրվածից կարելի է ենթադրել, որ ռուսական քարտեզը, ամենայն հավանականությամբ, մինչև Ատլասում տեղ գտնելը առանձին չի հրատարակվել, այլ եղել է ընդամենը քարտեզի կազմողական բնօրինակը: Եթե այն համեմատենք Ատլասում տեղ գտած մյուս քարտեզների հետ, ապա կնկատենք, որ բոլոր այդ աշխատանքները, որոնց մի մասը նույնպես ռուսական քարտեզների ֆրանսերեն թարգմանված տարբերակներ են, կազմված են մեծ խնամքով լեզենդի տեքստային և գծային տարրերը հստակ են:

Քարտեզի վրա չկա ռազմական օբյեկտների՝ կայանների, զորամասերի կամ դիրքերի իրավիճակային ցուցադրում: Ամենայն հավանականությամբ քարտեզը մաս է կազմում որևէ վարչական հանձնարարականի ու այդ փաստաթղթերի հետ մեկտեղ գտնվում է արխիվներից մեկում՝ որպես լրացուցիչ նյութ (վիճակագրական հրատարակումներ, բնակավայրերի ցուցակներ, հաշվետվություններ և այլն):

«Սևանա լճի ավազան»-ի քարտեզը շատ ամփոփ ու փոքր տարածքի մոդելն է, որը չի արտացոլում որևէ գործընթաց, թեմատիկ հստակ ուղղվածություն չունի: Քարտեզում բացակայում է քարտեզագրական շատ կարևոր տարրերից մեկը՝ Ռուսական կայսրության վարչական սահմանները: Այն ընդամենը ակնարկային քարտեզ է, որը նախատեսված չէ հրատարակման:

Վերն ասվածին ի լրացում նշենք, որ աշխարհագրական հետազոտություններին նվիրված Էլիզե Ռեկլուսի գրքում տեղ է գտել Դյու Բուա դը Մոնպերոյի կազմած, մինչև այժմ մեզ անհայտ «Գյոկ-Չայ» (Սևանա լիճ) վերտառությամբ քարտեզը (տե՛ս քարտեզ 2), որտեղ ներկայացված է լճի հարավարևելյան հատվածը¹: Այս հանգամանքը ևս վկայում է, որ Սևանա լճի և նրա ավազանի նկատմամբ ռուսական իշխանությունները ցուցաբերել են հատուկ մոտեցում:

¹ Տե՛ս **Reclus É.**, Gok-Tchai, Nouvelle géographie universelle, La terre et les hommes, L'Asie Russe, Paris, t. VI, 1881, p. 256:

Սևանա լճի մակարդակի բարձրության ճշգրտումը 1832 թ. դրությամբ մեզ համար կարևորվում է այնքանով, որ այսօր գոյություն ունի «Սևանա լճի հիմնահարց» հասկացությունը, և ավագանի Էկոհամակարգի խախտումը հիմնականում պայմանավորված է լճի մակարդակի արհեստական իջեցմամբ: 2019 թ. հունիսի 3-ի դրությամբ Սևանա լիճը ծովի մակարդակից 1900 մետր 75 սանտիմետր բարձրության վրա է եղել¹:

Հարկ է նշել, որ Դյու Բուա դե Մոնպերոն իր գրքի՝ Սևանա լճի ավագանին նվիրված հատվածում ևս քննարկել է լճի մակարդակի որոշման խնդիրները, և հանգել է այն եզրակացության, որ այն մոտավորապես 5000 թագավորական ոտնաչափ ($\text{pieds du roi} = 32,660 \text{ cm}$)² բացարձակ բարձրություն ունի³, այն է՝ շուրջ 1633 մ: Եվ այն, որ նա քաջատեղյակ էր լճին վերաբերվող տեղեկատվությանը, վկայում է Պարրոտից (Parrot) արված մեջբերումը⁴: Սա անուղղակիորեն ապացույցն է առ այն, որ Սևանա լճի մակարդակի բարձրության վերաբերյալ ընդունված միասնական տվյալներ այդ ժամանակ դեռևս չկային:

Նույն ժամանակահատվածին է վերաբերվում նաև Ի. Շոպենի Հայկական մարզին նվիրված աշխատությունում տեղ գտած Սևանա լճի մակարդակի բարձրությանը առնչվող տեղեկատվությունը («Կամերալային նկարագրություն»-ը կազմված 1829-1832 թթ.), որը բարոմետրական եղանակով իրականացրել է պրոֆեսոր Աբիլսը: Լճի մակարդակի բարձրությանն առնչվող նրա ստացած տվյալները (հաշված Սև ծովի մակարդակից)⁵ ֆրանսիական և անգլիական չափման միավորներով միմյանցից բավական տարբեր են և սխալ⁶:

Այն հանգամանքը, որ առաջին ջրաբանական հետազոտությունները Հայաստանում կատարվել են XIX դ. երկրորդ կեսին⁷, մեզ թույլ է տալիս փաստել, որ ֆրանսիական քարտեզի՝ Սևանա լճի մակարդակի բարձրության վերաբերյալ տեղեկությունը եղածներից ամենահինն է ու վստահելին, քանի որ

¹ Տե՛ս <http://yerkirmedia.am/social/sevana-lich-jri-makardak-vororgum/> (հասանելի էր 29.08.2019):

² Տե՛ս Anciennes unités de mesure françaises, http://fr.wikipedia.org/wiki/Anciennes_unités_de_mesure_françaises (հասանելի էր 29.08.2019):

³ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., էջ 304:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 303:

⁵ Ռուսաստանում օվկիանոսներին ու ծովերին աշխարհագրորեն հարող առանձին տարածքներում օգտագործում են տեղական պայմանական բարձրությունների համակարգեր: Այսպես օրինակ, գոյություն ունի Խաղաղօվկիանոսյան համակարգ՝ Հեռավոր Արևելքում, և Սևծովյան Սև ծովի ափերին մոտ տարածքների համար:

(Системы высот в геодезии; https://bstudy.net/616661/tehnika/sistemy_vysot_geodezii (հասանելի էր 25.08.2019 թ.):)

⁶ Տե՛ս **Шопен И.**, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, Санкт-Петербург, 1852, с. 421-422:

⁷ Տե՛ս **Մնացականյան Բ.**, Ջրաբանություն, Ա

շխարհագրական գիտությունը Հայաստանում, Երևան, 2006, էջ 34-39:

քարտեզը կազմելիս օգտագործվել են առաջադեմ մեթոդներ:

Խնդրո առարկա քարտեզից ստացած տպավորությունն այն է, որ լճի արևմտյան ափագիծը տրված է ճիշտ, մանրակրկիտ և բավական հստակ, ինչն ամեննին չենք կարող ասել արևելյան հատվածի համար:

Ինչպես նշել էինք, ուսումնասիրվող քարտեզի վրա բարձրության նիշերը բացակայում են, նշված չէ որևէ թիվ, որը ցույց կտար աշխարհագրական օբյեկտի բարձրությունը: Այս պայմաններում որոշել Սևանա լճի մակարդակը շատ բարդ և աշխատատար գործընթաց է: Մեզանում այս մոտեցմամբ բարձրության նիշերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալը առաջին փորձն է:

Ուսումնասիրությունը պայմանականորեն բաժանել ենք երեք փուլի.

ա) Ունենալ քարտեզի բնագրի ճշգրիտ պատճենը: Այդ նպատակով Ռուսաստանի ազգային գրադարանում պատճենել էինք բնագիրը, իսկ Ֆրանսիայի ազգային գրադարանում կատարել չափումներ բնագրի վրա և միայն այս բոլոր տվյալների համադրման օգնությամբ ստացել ենք բնագրի ուսումնասիրության համար պիտանի պատճենը:

բ) Աշխարհագրական տեղեկատվական համակարգում (USZ, GIS) ստեղծել մոդելավորման համար քարտեզագրական հիմք, որի հիման վրա կատարել մոդելավորումը: Այդ նպատակով մենք ընտրել ենք խորհրդային շրջանի տոպոգրաֆիական խոշորամասշտաբ քարտեզները:

գ) Համադրել US համակարգում ժամանակակից ռելիեֆային մոդելը, տոպոգրաֆիական քարտեզը և բնագիր հին քարտեզը, իսկ տոպոգրաֆիական քարտեզի՝ Սևանա լճի ափագծերը՝ բնագիր հին քարտեզի լճի ափագծերի հետ:

Չետագոտությունից պարզ դարձավ, որ Սևանա լճի ափագծի արևմտյան հատվածը քարտեզում իսկապես բավականին ճիշտ է ներկայացված և համապատասխանում է շուրջ 1916 մ. բացարձակ բարձրությանը, իսկ ափագծի արևելյան մասում կան մեծ և փոքր շեղումներ ու սխալներ, մասնավորապես խոսքը վերաբերում է հյուսիսարևելյան շրջանին և Արտանիշ թերակղզու հարավարևելյան հատվածին (տարածքն ունի 2000 մետրից ավելի բարձրություն, ծածկված է լճով, որը սկզբունքորեն հնարավոր չէր):

Վերոհիշյալ շեղումները ակնհայտորեն երևում են մեր մոդելավորած քարտեզներում (այս աշխատանքին մասնակցել է USZ ոլորտի փորձագետ Ս. Նահապետյանը): Առաջին քարտեզում ցուցադրված է ժամանակակից ռելիեֆային մոդելը նոր տոպոգրաֆիական քարտեզի համադրմամբ, իսկ երկրորդում՝ նույն ռելիեֆային մոդելի և Սևանա լճի հին քարտեզի համադրությունը (տե՛ս քարտեզ 3, 4):

Դյու Բուա դե Մոնպերոն ևս նկատել է քարտեզի վրա եղած շեղումները և անհամապատասխանությունները՝ կատարելով իր եզրահանգումները: Օրինակ, նա գրում է, որ կղզին ունի ընդամենը մեկ վերստ երկարություն և կես վերստ լայնություն, այնինչ բոլոր քարտեզներում այն չափազանց մեծ է գծա-

գրվել և շատ վատ տեղորոշվել. «Ինչպե՞ս պահանջել ավելի լավը, եթե լճի ուղղվածությունն ու ձևն արդեն իսկ սխալ են»¹:

«Մեկ այլ դիտարկում լճի վերաբերյալ. երկարության մոտավորապես մեջտեղում անսպասելիորեն բարձրանում է արևմտյանից դեպի արևելյան ափ ուղղված ոչ այնքան բարձր մի ցամաքալեզվակ, ... այս կերպ լիճը բաժանելով երկու մասի: Կարծում եմ՝ սա ոչ մի քարտեզում լավ չի վերարտադրվել, և որ անգամ հայտնի ինժեներների կազմած քարտեզը նույնպես այս առումով ճիշտ չէ. դրա մասին դատում եմ՝ ելնելով այդ լճի՝ իմ կողմից արված նկարից (տե՛ս նկար), որտեղ հրվանդանն անկասկած շատ ավելի է առաջ գալիս լճի մեջ, քան այն, որ նշված է նրանց քարտեզում»²:

Դյու Բուա դե Մոնպերոն փորձում է կարծիք հայտնել նաև քարտեզի բովանդակության և ճշգրտության վերաբերյալ. «Այս դիտարկումը չպետք է հիմք լինի քարտեզի մնացյալ մասի ճշմարտացիության դեմ, քանի որ այն մեծ հոգատարությամբ է գծահանվել նրանց համար, ովքեր նայում են բնակեցված և բնակելի ափերին, իսկ ինչ վերաբերում է հյուսիսային և անբնակ մասին՝ դրանք կազմվել են գլխավոր շտաբի փաստաթղթերի հիման վրա»³: Ակնհայտ է, որ հեղինակը քաջատեղյակ էր քարտեզը կազմելու մոտեցումներին: Նրա դիտարկումները լրացնում և ամբողջական են դարձնում մեր եզրահանգումները, այն է՝ քարտեզը ճշգրտության տարբեր աստիճան ունեցող հատվածների միասնությունն է:

Որպեսզի պատասխանենք այն հարցերին թե որն է նման մոտեցման պատճառը, և քարտեզը կազմելիս ինչպիսի սկզբունքներ են կիրառվել, անհրաժեշտ է ուսումնասիրել ռուսական քարտեզագրության պատմությունը, քանի որ քարտեզը գծահանել են ռուս ինժեներները 1832 թ.:

XIX դ. 30-ական թվականներից սկսած՝ գեոդեզիական ցանցի որակական փոփոխությունների պատճառով բարձրությունների գծահանման հիմնավորումը նպաստել էր քարտեզների՝ որպես տեղանքի մոդելի հետագա կատարելագործմանը: Դրա շնորհիվ սկսեցին մշակել ռելիեֆի արտահայտման տարբեր ձևեր՝ շտրիխային, ստվերարկում, հորիզոնականներ: Այս ձևով կազմված քարտեզները հնարավոր դարձրին ստանալ տեղանքին վերաբերող տարբեր տեսակի քանակական բնութագրեր, որոնք, անշուշտ, բարձրացնում էին հին քարտեզների դերը՝ որպես պատմական սկզբնաղբյուր:

Աղբյուրագիտական առումով շատ կարևոր է իմանալ, որ ռուսական խոշորամասշտաբ քարտեզների ճշտության աստիճանը կախված է նաև քարտեզի գծահանման ձևերից: Դրանք երեքն են՝ գործիքային, գործիքային տեղադրիտության և կիսագործիքային տեղադրիտության:

Վերը նշված գործընթացների գույքնթաց՝ միևնույն քարտեզը կազմելու

¹ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., էջ 306-307:

² Տե՛ս նույն տեղում, էջ 308:

³ Տե՛ս նույն տեղում:

փուլում օգտագործվում էին քարտեզագրական ընդհարացման (картографическая генерализация) տարբեր աստիճաններ: Մի կողմից քարտեզի վրա ճանապարհները, գետերը, լճերի ավազները և դրանց հարող տարածքները տրվում էին մանրամասն, մյուս կողմից՝ ջրբաժան տարածքները ընդհանրացված, երբեմն մտացածին: Ջրբաժանների և լեռնային շրջանների ընդհանուր գծերով պատկերումը բացատրվում է դրանց չուսումնասիրվածությամբ և անմատչելիությամբ: Եվ քանի որ «քարտեզը չի սիրում դատարկություն», չուսումնասիրված տեղանքը երբեմն պատկերվում էր ըստ գծագրողի երևակայության¹:

Դյու Բուա դե Մոնպերոն իր գրքում անդրադարձել է նաև Սևանա լճի ավազանի երկրաբանական կառուցվածքին, տվել է դրա ֆիզիկաաշխարհագրական նկարագրությունը, քննարկել լճի չափերի, ջրի որակի, նրա անվան և ավազանի գետային ցանցի հետ կապված որոշ հարցեր, կատարել է տարածքի դիտարկում ու ջերմաստիճանի չափումներ, ներկայացրել տարածաշրջանի պատմական ակնարկը՝ իր մեկնաբանությամբ, անդրադարձել վերաբնակեցված գյուղերին, հայ նոր վերաբնակներին, հայկական եկեղեցիներին և այլն:

Ատլասում տեղ գտած նկարի շնորհիվ հեղինակը կարողացել է մեզ հաղորդել շուրջ երկու հարյուր տարվա վաղեմության, հայ գյուղացու կենցաղին վերաբերող հետաքրքիր տեղեկատվություն, որը կարող է պատմական հրաշալի սկզբնաղբյուր լինել ուսումնասիրության համար:


Հետաքրքիր դիտարկում. Դյու Բուա դե Մոնպերոն Սևանա լճի ֆրանսերեն քարտեզը կազմվել է ռուսական քարտեզի օրինակով, և ինչպես հայտնի է, ռուսական քարտեզներում լիճը հիմնականում տրվում էր օտարալեզու Gokhtchaï, Gok-htchaï կամ Goktcha տարբերակներով (օրինակ, տե՛ս քարտեզ 2): Սակայն, հեղինակը իր կազմած նոր քարտեզում (ինչպես նշել ենք, այն ռուսական քարտեզի ֆրանսերեն տարբերակն է) տվել է հայկական տարբերակը՝ Սևանա լիճ (Lac Sévang) ձևով (տե՛ս քարտեզ 1): Ընդ որում, նա այդ սկզբունքին հարազատ է մնում նաև իր գրքում ճանապարհորդության շարադրանքում:

Այս կերպ Դյու Բուա դե Մոնպերոն փորձել է վերականգնել պատմական ճշմարտությունը, արտահայտել իր անկեղծ սերն ու վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ:


¹ Տե՛ս **Постников А. В.**, Развитие крупномасштабной картографии в России, Москва, 1989, **Салищев К. А.**, նշվ. աշխ.; **Берлянт А. М.**, Картография, Москва, 2001, **Հովհաննիսյան Հ. Մ.**, Քարտեզագրություն, Երևան, 1973, Инструкция землемерам к генеральному всей империи нашей размежеванию, Санкт-Петербург, 1766, Наставление правительствующего Сената из Межевой экспедиции, Санкт-Петербург, 1 ПСЗ, т. XVII, № 12711, 1766, **Цицианов Д. П.**, Краткое математическое изъяснение землемерия межевого, Санкт-Петербург, 1757, **Новокшанова-Соколовская З. К.**, Картографические и геодезические работы в России в XIX-начале XX вв., Москва, 1967, **Берлянт А. М.**, Карта-второй язык географии. (Очерки о картографии), Москва, 1985:




Рисунік 2



Քարտեզ 3



Քարտեզ 4



Նկար 1

Վարդան Մխիտարյան, Գոար Գամբարյան – «Карта бассейна озера Севан в Армении, составленная русскими инженерами в 1832 г.» как исторический первоисточник

Использование старых карт как исторических первоисточников актуально для решения как гуманитарных, так и экологических проблем. В ходе нашего исследования была сделана попытка проанализировать карту Фредерика Дюбуа де Монпере «Карта бассейна озера Севан в Армении, составленная русскими инженерами в 1832 г.», сравнить полученные результаты с его книгой «Путешествие» и другими материалами. Надеемся, что выводы предоставят исследователям возможность рассмотреть современные экологические проблемы озера Севан с другой точки зрения.

Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan – “Map of Lake Sevan Basin in Armenia Drawn by Russian Engineers in 1832” as a Historical Source

The use of ancient maps as a historical source is applicable for resolving both humanitarian and environmental issues. In the present study, an attempt was made to analyze Frédéric DuBois de Montperreux’s “Map of Lake Sevan Basin in Armenia, Drawn by Russian Engineers in 1832” and compare the results with his book “Travel” and other materials. Hopefully, the findings will provide the researchers with an opportunity to discuss the current environmental issues of Lake Sevan from another perspective.

Ներկայացվել է 04.09.2019

Գրախոսվել է 14.10.2019

Ընդունվել է տպագրության 05.11.2019